

ԱՉՔԻ ԹԱՂԱՆԹՆԵՐԻ ՆԵՐՉԱՏԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԽԱՆԳԱՐՄԱՍԲ
ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԲԱՑԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ԳԼԱՈՒԿՈՍԱՅԻ
ՊԱԹՈԳԵՆԵԶԻ ՏԵՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

ԶԻԼՖՅԱՆ Ա.Ա.^{1,2}

¹ Երևանի Մ. Զերացում անվ. պետական համալսարանի գիտահետազոտական կենտրոն, Երևան, Հայաստան
² «Շենգավիթ» բժշկական կենտրոն, Երևան, Հայաստան

Նյութը վերատպվում է **InTech** հրատարակչության կողմից *Շիմուն Բուլմելթի խմբագրությամբ*
GLAUCOMA - BASIC AND CLINICAL ASPECTS (2013) հրատարակված գրքից

Հետազոտությունը նվիրված է ժամանակակից ակնաբուժության արդիական հիմնախնդիրներից մեկի՝ առաջնային բացանկյան և պսևդոբսֆոլիատիվ (կեղծբսֆոլիատիվ) գլաուկոմայի ինդուկցիայի հիմքում ընկած մեխանիզմների բացահայտմանը: Հիմնախնդիրը մինչ օրս մնում է ավելի քան արդիական, քանի որ բաց է մնում հետևյալ հարցի պատասխանը՝ նշված հիվանդության դեպքում որո՞նք են ռեգիոնալ մեխանիզմները՝ ընկած աչքի առաջային խցիկի տրաբեկուլյար ապարատի անկյունի խանգարման ֆունկցիայի և ներաչքային ճնշման բարձրացման հիմքում:

Համաձայն ժամանակակից պատկերացումների, ներաչքային բարձր ճնշման հիմքում ընկած պրոցեսներն առաջանում են հենց աչքի կառուցվածքում, շարակցական հյուսվածքներում, ցիլիար մարմնի էպիթելիային և էնդոթելիային բջիջներում, եղջրաթաղանթում, ոսպնյակում, ցանցաթաղանթում:

Այդ բջիջներն օժտված են ընտրողական սեկրետորային ակտիվությամբ՝ մի շարք կենսաբանական նյութերի արտադրման պլանում, ուղղակի կամ անուղղակի կերպով ազդող ներաչքային ճնշումը կարգավորող պրոցեսների վրա:

Վերջին 30 տարվա գրականության տեղեկություններով, որտեղ ցիլիար մարմնում, եղջրաթաղանթում, ցանցաթաղանթում, ոսպնյակում, տրաբեկուլյար ցանցում քննարկվում են ֆիբրոբլաստիկ, էպիթելիալ և էնդոթելիալ շարքի բջիջների մեդիատորային ֆունկցիաները, հիմք են ծառայել հետազոտության համար՝ ուղղված *in situ* ֆիբրոնեկտինի, IgF-1, PGE-2 և կորտիզոլի արտադրման դերի բացահայտմանը՝ առաջնային բացանկյան գլաուկոմայի դեպքում:

Մեր կողմից հայտնաբերված առաջնային բացանկյան գլաուկոմայով պացիենտի ներաչքային հեղուկում ֆիբրոնեկտինի և IGF-1-ի բարձր ցուցանիշները վկայում են տրաբեկուլյար ցանցի բջիջներում նշված ցիտոկինների հիպերսեկրեցիայի մասին:

Առաջնային բացանկյան գլաուկոմայի, նաև պսևդոբսֆոլիատիվ գլաուկոմայի առկայության դեպքում ֆիբրոնեկտինի և ինսուլինանման աճի գործոն-1-ի բարձր ցուցանիշները վկայում են աչքի առաջային խցիկի անկյան տրաբեկուլյար ցանցի դրենաժային (հեղուկաբաշման) ֆունկցիայի խանգարման մասին, որով և, մեծ առումով, պայմանավորված է ներաչքային ճնշման բարձր մակարդակը:

